



# Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 90 JANUARY / ԹԻԻ 90 ՅՈՒՆՈՒԱՐ 2025

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

## Թեմական Լուրեր

Տարուան առաջին օրը պատարագ մատուցուեցաւ Մելպուրնի Սուրբ Աստուածածին, Ուէկթուրթփիլի Ս. Երրորդութիւն եւ Չացուուտի առաջնորդանիստ Ս. Յարութիւն եկեղեցիներուն մէջ: Այս վերջինիս մէջ պատարագիչն էր Բարձր. Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան: Յընթացս Պատարագի տեղի ունեցաւ Հայրապետական Օրհնութիւն ինչպէս նաեւ արդէն աւանդութիւն դարձած Նուրի Օրհնութիւն: Յաւուր պատշաճի քարոզեց Սրբազան հայրը, բնաբան ընտրելով «Փառք Քեզ Աստուած Փառք Քեզ, Յաղագս Ամենայնի Տէր, Փառք Քեզ»: Թէեւ տարուան առաջին օրն է, բայց այս ժամուն արդէն 2025-էն կոտորակ մը անցեալին կը պատկանի, ըսաւ Սրբազանը, եւ բացատրեց որ խիստ կարեւոր է ժամանակին յարգը գիտնալը, իսկ այդ ժամանակը սահմանափակ է՝ մեր ծնունդէն մինչեւ մեր մահը: Սրբազան հայրը ժամանակի օգտագործումը էական կը գտնէ, երբ նիւթական մեր ձեռքերունմէրը հոգեւոր արժէքներու կը վերածուին: Անդրադառնալով Աստուած յիշելու հանգամանքին, Սրբազանն ըսաւ որ մենք ընդհանրապէս զԱստուած կը փնտռենք երբ նեղութեան մէջ ենք: Պէտք է նաեւ զԻնք փնտռել մեր ուրախութեան մէջ, զԻնք ուրախացնենք մեր ուրախութեամբ, փառք տալով Անոր Իր շնորհած բարիքներուն համար: Խօսելով շնորհակալութեան մասին, Սրբազանը բացատրեց թէ իր կատարածին համար մեկուն շնորհակալ ըլլալով՝ զայն կ'ուրախացնենք, նոյնն է Աստուծոյ պարագային, պէտք է մեր բարի գործերով յայտնենք մեր շնորհակալութիւնը Աստուծոյ եւ ուրախ պահենք մեր Տէրը: Շնորհակալութիւն յայտնենք նախորդ տարուան Անոր տուած բարիքներուն համար եւ այն բարի գործերը որոնք չենք կարողացած անցեալին ամբողջացնել՝ կարողութիւն խնդրենք որ կարենանք զանոնք ամբողջացնել: Աստուծոյ տուած գործը կատարելը հպարտութիւն է եւ պատիւ իւրաքանչիւր բարեգործ անձի համար:





Սրբազանը առողջություն, համերաշխություն մաղթեց հաւատացեալներուն, բայց մանաւանդ՝ «խաղաղութիւն ունենաք ձեր հոգիներուն մէջ, հոգեւոր խաղաղութիւն, որովհետեւ երբ դուք խաղաղ էք հոգիով, խաղաղ են նաեւ ձեր ընտանիքը, ձեր ընկերները եւ ձեր շրջապատը» եզրակացուց Սրբազանը: Յաւարտ Պատարագի, օրհնուած նուրբ բաժնուեցաւ հաւատացեալներուն:

**Կիր., 5 Յունուար** – Հայկազուն Սրբազան, ինչպէս աւանդաբար ամէն տարի, Ճրագալոյցի պատարագը մատուցեց Ուէնթուրթովիլի Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ մէջ, ի ներկայութեան բազմաթիւ հաւատացեալներու ինչպէս նաեւ ի մասնակցութեան խորանի վրայ բազում ծառայողներու, ինչ որ դրական երեւոյթ էր եւ ոգեւորող: Սրբազան հօր սպասարկեց Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, հոգեւոր հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ: Մանրամասնութիւններուն մասին տես Լուրեր Ծուխերէն բաժնին մէջ:



**Բշ., 6 Յունուար** – Սուրբ Ծննդեան առիթով Հայկազուն Սրբազանն էր Պատարագիչը Սուրբ Յարութիւն Առաջնորդանիստ Եկեղեցոյ մէջ: Հրաշափառով առաջնորդուելով, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ քահանայից, սարկաւազաց, դպրաց դասերուն, օրհնելով բարեպաշտ ժողովուրդը մտաւ եկեղեցի: Սպասարկող՝ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Սրբազանին իմաստալից քարոզին բնաբանն էր «Փառք ի Բարձունս Աստուծոյ եւ յԵրկիր Խաղաթութիւն, ի Մարդիկ Հաճութիւն» հրեշտակին խօսքերը, որոնք ըսուած էին բարի հովիւներուն, որոնք պիտի երթային երկրպագելու մտորին մէջ պատկած Յիսուսին: Բայց ինչո՞ւ հովիւներու կ'երեւեր

Աստուած, որովհետեւ Հրէաստանի մէջ իմաստուն մարդ չէր մնացած, հակառակ Աստուծոյ դարերու ընթացքին կատարած փորձերուն կարգի բերելու համար մարդկութիւնը, մարգարէներու եւ հոգեւոր մարդկանց միջոցաւ: Քրիստոս կը ծնէր եւ կը մարդանար ու մեզի պէս ապրելով կ'ապացուցեր որ հնարաւոր է մարդ ապրէր աշխարհի մէջ հոգեւոր արժէքներով եւ Աստուծոյ տուած շնորհները ի սպասս դնել իր նմանին եւ սիրելով զայն: Խօսելով այսօրուան կեանքին մասին, որ համարեա բաղդատելի է մարդկութեան ապրած կեանքին նախքան Քրիստոսի ծնունդը, կեանք մը որ կը հիմնուէր նիւթին եւ անոր պաշտամունքին վրայ:







Սրբազանը ահագանգեց որ այսօր ընտանիքի գաղափարը խախտած է մարդկութեան մօտ, մարդը անսահման ազատութեան մէջ անիշխանութեան կ'երթայ, իսկ այս երեւոյթները մարդկութիւնը կ'առաջնորդեն իր կործանման: Խօսելով մարդկային արդարութեան մասին, Սրբազանը բացատրեց որ այդ արդարութիւնը հիմնուած էր միայն ու միայն շահի վրայ: Օրինակ բերաւ Կազայի, Արցախի մէջ պատահածները, որոնց նկատմամբ աշխարհը լուռ է անտարբեր մնաց: Սուրբ Ծնունդի տօնին առթիւ Սրբազան հայրը խնդրեց Աստուծմէ որ լուսաւորէ մեր մտքերը, պարգևէ մեզի իրար հանդուրժելու կարողութիւն, սիրելու զիրար, որպէսզի Աստուծոյ խաղաղութիւնը ըլլայ մեր մէջ, ամրագրուած Յիսուս Քրիստոսով, որպէսզի կարենանք յառաջ երթալ որպէս անհատ, համայնք եւ որպէս ժողովուրդ: «Ժամանակն է անդրադառնալու մեր պարտականութեանց: Մեր ասանդութեանց տէր կանգնինք, զանոնք փոխանցենք մեր սերունդներուն, այլապէս մեզի յաջորդող սերունդները պիտի կորսուին որպէս Քրիստոնէայ եւ որպէս Հայ» իր խօսքը եզրափակեց Սրբազանը, եւ ուժ ու կորով մաղթեց բոլորին հոգ տանելու զալիք սերունդներուն: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ ջրօրհնէք, Քրիստոսի մկրտութեան ի յիշատակ: Կնքահայրն էր Սեւան Արա Թեւանեան: Օրհնուած ջուրը բաժնուեցաւ հաւատացեալ ժողովուրդին: Սրբազան հայրը թափօրով առաջնորդուեցաւ Առաջնորդարան, ուր տեղի ունեցաւ տարուան առաջին Տնօրհնէքը:

Ըստ տարիներու սովորութեան, Ծնունդի պատարագէն ետք Քահանայ հայրերը եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ այցելեցին Առաջնորդարան, ուր Սրբազան հայրը եւ թեմական խորհուրդի անդամները զիրենք ընդունեցին: Ներկայացուցիչներէն իրաքանչիւրը արտասանեց սրտի խօսք: Այսպէս, յանուն ՄԴՀԿ-ի խօսք առաւ Պրն Մանուկ Տեմիրճեան, ՀՅԴ-ի կողմէ՝ Պրն Վիգէն Քորթեան, ՌԱԿ-ի՝ Տոքթ Յարութիւն Ճեպէճեան, ՀԲԸՄ-ի՝ Պրն Սարգիս Մանուկեան, Համազգայինի՝ Տիկ Վարդենի Խուտեցեան, ՀՕՄ-ի՝ Տիկ Հայկուհի Սարեան, ՀՄԸՄ-ի՝ Տիկ Ալիս Մումճեան, Հայ Երեցներու Միութեան՝ Պրն Պերճ Մումճեան, իսկ Հայ Եկեղեցուոյ

Չային կողմէ խօսք առաւ Տիկին Մարինա Աւագեան-Չափրագեան: Խօսք առին նաեւ Հայ համայնքի մէջ անցեալին բեղուն գործունէութիւն տարած Տիարք Վարուժան Իսքէնտերեան եւ Սարգիս Ետէլեան: Խօսքերը կեդրոնացած էին ընդհանրապէս մարտահրաւերներ յաղթահարելու, միասնականութեան, Եկեղեցի-Համայնքային կազմակերպութիւններու համագործակցութեան եւ անոնց ղեկավարութեան ցուցաբերած պատրաստակամութեան, հաւատքի ամրապնդման, ապգայատեսիլ ծրագիրներու կարելոքութեան, Հայրենիքի հզօրացման եւ Միջին Արեւելեան գաղութներուն պատճառած մտահոգութեանց:



Աւարտին, Սրբազան հայրը շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբին, որու ժրաջան անդամուհիները, ինչպէս մի շտ, այսօր ալ մեծ սիրով հիւրընկալեցին ներկաները եւ ստեղծեցին բարձր տրամադրութիւն: Սրբազանը փառք տուաւ Աստուծոյ որ տարի մը եւս Թեմական Խորհուրդին հետ միասին լաւ ծրագիրներ ի գործ դրին յօգուտ մեր համայնքի բոլոր զաւակներուն: Ան իր վստահութիւնը յայտնեց որ Թեմական Խորհուրդը նոյն ձեւով նեցուկ պիտի հանդիսանայ յաջորդ Առաջնորդին եւ օրինակ պիտի դառնայ այլ թեմերու: Սրբազանը իր վստահութիւնը յայտնեց որ ստեղծուած միասնական ոգին պիտի շարունակուի գաղութէն ներս եւ ինք, հեռուէն, գաղութի յառաջընթացին առնչուած լուրերուն ուրախութեամբ պիտի հետեւի:

Ապա, Սրբազան հայրը, Թեմական Խորհուրդի անդամները եւ հոգևոր հայրերը, Էտկարեան սրահին մէջ, մասնակցեցան ճաշկերոյթի մը ընդառաջելով Պրն Աւօ Թեւանեանի հրաւերին, իր թոռան Սեւան Արա Թեւանեանի Խաչի Կնքահայր ըլլալուն ուրախ առիթով:

**Շբ., 11 Յունուար** – Հայկազուն Սրբազան հայրը, որպէս Հայրապետական Պատուիրակ Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի Երկիրներու Թեմին մեկնեցաւ Սինկափուր, հանդիպելու Հայ համայնքին եւ մատուցելու Սուրբ Ծննդեան Պատարագ: Սրբազան հայրը Սիտնի վերադարձաւ Յունուար 20-ին:



**Բշ., 21 Յունուար** – Սրբազան հայրը հանդիսապետեց Տիկին Սիրան Գասապեանի յուղարկա-ւորութեան եւ արտասանեց իր սրտի խօսքը Տիկին Սիրանը կոչելով «այս եկեղեցիին հաւատքին մաս եւ բաժին», «իր չարչարանքն ու տառապանքը ուրախութեան վերածող», «Աստուծոյ քաջ զին-ւոր»:

Յիշատակը անմար պիտի մնայ Տիկին Սիրանին:

**Կիր., 27 Յունուար** – Այսօր աւարտեցաւ Արժանապատիւ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանի քահանայական ձեռնադրութեան քառասնամեակը: Տէր հօր ձեռնադրութիւնը տեղի ունեցած էր 27 Յունուար 1985-ին ձեռամբ Հոգեւոյս Աղան Արքեպիսկոպոս Պալիօզեանի: Այս առիթով, օրուան պատարագիչն էր Տէր Նորայրը: Նախքան իր յաւուր պատշաճի արտասանելի քարոզը, Սրբազան հայրը յայտարարեց որ այսօր 40րդ տարեդարձն էր Նորայր Աւագ Քահանային քահանայական ձեռնադրութեան: Սրբազանը ըսաւ որ քառասուն տարի առաջ, հրաւերովը Աղան Սրբազանին, սարկաւագ Գեորգ Բաթանեան Հալէպէն հրաւիրուած էր ամուսնացեալ քահանայ ձեռնադրուելու եւ ծառայելու Աւստրալահայ հոգևոր հօտին: «Եւ Աստուած ուժ եւ եռանդ տուաւ Նորայր Քահանային, որպէսզի անմնացորդ ծառայէ այս համայնքին, միշտ գիտնալով որ իր ծառայութիւնը Աստուծոյ փառքին համար է»: Սրբազան հայրը վկայեց որ Տէր Նորայր, մինչեւ օրս,





տակաւին մեզ նոյն հաւատքով աղօթքի կ'առաջնորդէ: «Վաստակդ շատ է սիրելի Տէր Հայր» բառերով իր խօսքը աւարտեց Սրբազանը:

Հոգեհանգստեան պաշտօնն ետք, յաւարտ Սուրբ Պատարագին, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ պատարագիչ քահանայ հօր, Արժ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեանի, Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, սարկաւագաց եւ դպրաց դասին ու հաւատացեալ ժողովուրդին, թափօրով ուղղութեամբ եկեղեցոյ կից բակը, ուր տեղի ունեցաւ խաղողօրհնէք: Աւարտին, խաղողը ողկոյզներով բաշխուեցաւ հաւատացեալ ժողովուրդին:



**Ուրբաթ 31 Յունուար** – Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք Նաճարեան նախագահեց յոբելեանական հանդիսութեան նուիրուած Արժանապատիւ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանի քահանայական ձեռնադրութեան եւ օժման, կազմակերպուած Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Ծխական Խորհուրդին կողմէ:

Ծխական Խորհուրդի աստենապետ Պրն Զաւէն Եաղճեանի բարի գալստեան խօսքով եւ Սրբազան հօր աղօթքով մեկնարկուեցաւ հանդիսութիւնը: Հանդիսավարն էր Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Հոգեւոր Հովիւր Ս. Յարութիւն Եկեղեցոյ: Եկեղեցոյ լայն ընտանիքը ներկայ էր իր ներկա-

յացուցիչներով՝ Թեմական Խորհուրդ, Ծխական Խորհուրդ, Սարկաւագաց եւ դպրաց դաս, Կալուածոց խնամակալութիւն, երգչախումբ, Տիկնանց յանձնախումբեր, ՀՀԲԿ, Ս. Յարութիւն Եկեղեցոյ պաշտօնէութիւն: Ասոնց կողքին ներկայ էին նաեւ Տէր Նորայրի ընտանիքին անդամները՝ Երեկցին, զաւակներ, թոռներ, ինչպէս նաեւ Քահանայական ձեռնադրութեան կնքահայր հանգուցեալ Արամ Ժօզէֆ (Յովսէփեան)ի դուստրը Տիկին Լիտիա Փրոսքուրիւնն ու թոռները: Մեծ էր ուրախութիւնը բոլորին: Տէր Նորայր իր կոչումին տէր՝ եղած էր ՏԷՐ եւ ՀԱՅՐ բոլորին: Աւարտին կը ներկայացնենք Տէր Նորայրի հակիրճ կենսագրութիւնը, որ հոգեւոր կեանքի մը խօսուն օրինակն է:

Հայ Եկեղեցոյ Չայնի բազում տարիներու տնօրէն-հաղորդավարուհի Տիկին Մարինա Աւագեան-Չափրագեան եւ տասնեակ տարիներու գործակից Տէր Նորայրին, կենդանացուց շատ մը յուշեր առնչուած Նորայր Քահանայ հօր, ուր կարմիր թելի նման դուրս կու գայ Տէր հօր փոքր տարիքէն նուիրումը իր ազգին ու եկեղեցոյ, որուն քաջալերողը եղած է Տէր հօր մայրիկը:





Ան վեր առաւ Տէր հօր ջանասիրութիւնը եւ անընդհատ սորվելու մարմաջը, անոր Հայերէն լեզուին նկատմամբ ունեցած անհուն սէրը եւ հայերէնագիտութիւնը: Գնահատանքով արտայայտուեցաւ Տէր հօր աւելի քան 35 տարի Լոյս ամսաթերթի խմբագրութեան, անոր հանդէպ ցոյց տուած բժախնդրութեան, որ նմանցուց «նորածին զաւակ մը փայփայելուն»: Տիկին Սարինա վեր առաւ նաեւ Երեցկին Սոնայի համերատարութիւնը եւ թիկունք ըլլալը Տէր Հօր: Ապա որպէս եզրափակում, ան արտասանեց Թէքէանի «Հաշուեյարդար» բանաստեղծութիւնը, որպէս ձօն Տէր հօր: Այնտեղ կ'ըսուի՝ «Կեանքէն ինծի ինչ մնաց, ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ այդ միայն»: Բանաստեղծութիւնը ամբողջութեամբ կը պատշաճի Տէր հօր վարած նուիրեալ կեանքին:

Տէր Աւետիս Քահանայ խօսք առնելով վեր առաւ Տէր հօր Բարի եւ Քաջ Հովիւ ըլլալու յատկութիւնը: Տէր Նորայր եղած է Տէր Աւետիսի ոչ միայն գործակիցը այլ իմաստուն խորհրդատուն: Ան Տէր Նորայրին քաջութեան եւ աշխատասիրութեան վերագրեց իր հօտը ուղիղ ճամբայ առաջնորդելու աշխատանքը: Տէր հայրը վեր առաւ յուշերէն մին ուխտագնացութիւնը Էջմիածին, ուր տօնակատարուեցաւ Տէր հօր ծննդեան 77-ամեակը 2015 թուականին, Միւռնօրհներէի օրը: Տէր հայրը մաղթեց Տէր Նորայրին ցմահ շարունակել ծառայելու Հայ համայնքին եւ եկեղեցւոյ:

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն Զաւէն Եաղճեան կարդաց Ծխական Խորհուրդի բարեմաղթանքն ու շնորհաւորագիրը յորելենական այս առիթով:

Յուզախառն իր սրտի խօսքը արտասանեց Տիկին Լիտիա Փրոսքուրին, յիշեց իր ծնողները մանաւանդ հայրը՝ Արամ Ճոզէֆը, որ կը յատկանշուէր իր հաւատքով եւ եկեղեցասիրութեամբ, եւ որոնց պատճառով ան ստանձնած էր ըլլալ կնքահայր Տէր Նորայրի ձեռնադրութեան:

Բաթանեան եւ Քէշիշեան ընտանիքներու կողմէ սահուն հայերէնով իր սրտի խօսքը արտասանեց Անիթա Քէշիշեանը՝ Տէր Նորայրի թոռնուհիներէն մին: Մէջբերենք իր անկեղծ խօսքերէն. «...Իր(Տէր Հօր) ծառայութիւնը մեզի համար իսկական նուէր է, ցոյց տալով ինչպէս սիրել Աստուած, այլեւ ինչ կը նշանակէ ապրիլ Աստուծոյ սիրով: Իր թոռները ըլլալով, Աստուած մեզի առիթ նուիրած է որպէսզի վայելենք իր բարի սիրտն ու համեստութիւնը»: Իր խօսքը Անիթան եզրափակեց «Մեր շատ սիրելի Մեծ Հայր, կը մաղթենք որ Աստուած քեզի պարգեւէ երկար եւ առողջ կեանք, որ միշտ մեր հետ ըլլաս ուրախ առիթներով, եւ կարենաս շարունակել Աստուծմէ քեզի նուիրուած այս սուրբ գործը: Շնորհակալ ենք քու բոլոր խրատներուդ եւ սիրող համար մեր բոլորին հանդէպ»:

37 տարիներու գործակից Վարդան Սարկաւազ Էլմասեանի հիմունքով խառն խօսքերը ոգեւորող վկայութիւն էին: Տէր հայրը առաջին նախագահը եղած է Լուսաւորիչ երգչախումբին, ինք ընտրած է Վարդան Սարկաւազը ղեկավարելու այս երգչախումբը ինչպէս նաեւ առաջարկողը Կոմիտասեան Պատարագի ուսուցման: Երգչախումբը մինչեւ օրս կը շարունակէ իր ծառայութիւնը Ս. Յարութիւն եկեղեցւոյ: Իր խօսքի աւարտին՝ Վարդան Սարկաւազ մեներգեց Տէր Նորայրին սիրած երգերէն մին՝ «Կիլիկիա»: Իր շնորհաւորանքի խօսքը կարդաց Լուսաւորիչ երգչախումբի ատենապետուհի Տիկին Սարթա Նարինլի, յատկապէս անդրադարձնալով Տէր հօր իմաստալից քարոզներուն:





Հարթակ հրահրուեցաւ Երեցկին Սոնան, որ ամէն օր նեցուկ հանդիսացած է իր ամուսնոյն եւ զայն քաջալերած լաւագոյնս ծառայելու եկեղեցոյն եւ համայնքին ընդհանրապէս: Ան երախտագիտութեամբ յիշեց Աղան Արք Պալիօզեանը, առանց որուն այսօր այստեղ չէր ըլլար Բաթանեան ընտանիքը: Իսօսքը ուղղելով Տէր Նորայրին՝ «...Անոր(Աղան Սրբազանին) կը պարտինք բոլոր այն ինչ որ մաս կը կազմէ քու կենսագրութեանդ 1985 Յունուար 26-էն ետք» ըսաւ Երեցկինը: Անդրադառնալով Տէր Հօր հայկականութեան կառչելուն Երեցկինը ըսաւ «...քեզի համար հսկայ կարեւորութիւն ունեցաւ ընտանիքիդ անդամներուն հայապահպանումը, հայեցի դաստիարակութիւնը, կիրթ մարդ եւ մաքուր հայ մեծնալը: Զաւակներուդ մէջ կարողացար դնել մեսրոպեան շունչը, որը շարունակուեցաւ...»: Իսօսելով Տէր հօր ծառայասիրութեան մասին Երեցկին ըսաւ «...Դուն մեզ քաջալերեցիր որ քու օրինակովդ բարի նպատակներու ծառայենք: Ծառայութիւնը քու առօրեայ էր, զայն նաեւ դարձուցիր մերը: Սկզբունք են քեզի հաւատքը, եռանդով աշխատասիրութիւնը, ծառայութիւնը:»



Ապա եզրափակեց ըսելով. «Յանուն մեր ընտանիքին, կը շնորհաւորեմ յոբելեանական այս օրը, զաւակներդ ու թոռներդ բախտաւոր են այս օրը տեսնելուն, իրենց համար միայն յիշատակ պիտի չըլլայ այս օրը, այլ պիտի ծառայէ որպէս ուղենիշ»:

Սուրբ Յարութիւն եկեղեցոյ անունով Տէր հօր յանձնուեցաւ գնահատանքի յուշանուէր մը եւ հատուեցաւ յոբելեանական կարկանդակը:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Հայկազուն Սրբազան հայրը, որ իր տպաւորութիւնները բացայայտեց ըսելով թէ ամէն անգամ որ Տէր Նորայր

կը պատարագէր՝ զինք կը յուզեր որովհետեւ իւրաքանչիւր պատարագին Տէր հայրը կ'ոգեւորուէր եւ ոգեւորութիւնը իր գագաթնակէտին կը հասցնէր: Ասոր դրդապատճառը Տէր հօր խոր հաւատքն էր: Սրբազանը մեծապէս գնահատեց երեցկնոջ աշխատանքը որպէս կողակից: Անզերէնով արտասանուած բաժնին մէջ Սրբազանը խօսեցաւ Տէր հօր յանձնառութեան մասին եւ իր առինքնող ձայնով Հայ եկեղեցոյ երաժշտութիւնը ճիշդ մեկնաբանելու յատկութեան մասին: Անդրդարձաւ նաեւ Տէր հօր կարգապահութեան, որուն շնորհիւ ան անմնացորդ ծառայութիւն ունեցաւ: Կարգապահ ամէն ինչի մէջ, Տէր հայրը իր կեանքը դարձուց լուսաւոր եւ արդիւնաշատ: «Նուիրումդ օրինակ է բոլորիս, մեզ ոգեւորեցիր քու կեանքովդ» իր սրտի խօսքը եզրափակեց Սրբազանը:





Պողոս Սրկ Քելեշեան երգեց «Ախ ինչ լաւ է սարի վրայ» երգը, խօսք՝ Յովհաննէս Թումանեանի, որմէ ետք Տէր Նորայր երգեց իր սիրեցեալ երգերէն՝ «Լեռներ Հայրենի»:

Տէր Աւետիս իր շնորհակալութիւնը յայտնեց Տիկնայք Լորա Արթինեանին եւ Վերա Իվանեանին յոբելէնական հանդիսութեան նուիրուած գեղեցիկ գրքոյկին համար, որուն արժանի է Տէր Նորայր: Սրբազան հօր «Պահպանիչ» ով փակուեցաւ երկու ժամ տեւած ճաշկերոյթ-հանդիսութիւնը:

Տէր Նորայր Աւագ Քահանայ Բարձրանէնի Արտասանած Խօսքը (յապարտումներով)

Նուիրական եւ հոգեկան գոհունակութեան պահ մըն է ինձի համար, այս պահը:



Մտքիս մէջ թարմ է տակաւին այն օրը, երբ ընտանիքով ժամանեցինք այս հիւրընկալ երկիրը, հոս կայք հաստատելու նպատակով, քահանայական օծումի քաղցր լուծը ստանձնելու եւ ծառայելու մեր հաւատացեալ ժողովուրդին: Երբ ժամանեցինք, տեսնելով շուրջս համախմբուած հայ ժողովուրդի բեկորները, որոշեցի ամբողջ ջանքըս ու կարելիութիւններս ի գործ դնել այս ժողովուրդի ակնկալիքները իրականացնելու համար:

Հայ եկեղեցին մեր ազգի պահպանութեան ամրակոտ ամրոցն է եւ մենք որպէս տարագիր ժողովուրդ, պէտք է արժեւորենք մեր պապերու արեան գնով պաշտպանուած հաւատքի այս ամրոցը: Անոնք եղան արթուն պահակները մեր հաւատքի տան, ոգի ի բոին աշխատեցան ու պահպանեցին եկեղեցին: Այսօր, որպէս արթուն պահակները մեր ազգային ու քրիստոնէական արժէքներուն, ամենայն գիտակցութեամբ, մեր ներդրումը կը կատարենք մեր ամբողջ կարողականութեամբ ու նուիրումով ծառայելու մեր նախնեաց սուրբ հաւատքը պահպանելու յառաջընթացին, զոր կ'արտայայտենք մեր գոհողութեամբ եւ միասնական ոգիի ամրապնդումով: Երբ տակաւին մանուկ հասակով մուտք կը գործէի մեր հաւատքը ամրապնդող եւ ուռճացնող ու մեր գոյութիւնը նուիրականացնող ու պահպանող մեր եկեղեցոյ կամարներուն ներքեւ, մէկ նպատակ կը հետապնդէի, ծառայել մեր ազգային սրբութիւններուն, որպէսզի մեր հաւատքի տունները անսասան մնան: Երբ դպրոցական մանուկներ էինք, ու մեր ծնողները կը պատմէին իրենց կեանքի դառն տառապանքներուն մասին, զորս կրած էին իրենց քրիստոնէայ հաւատքին պատճառով, չէինք կրնար անտարբեր մնալ...



Մանուկ հասակիս, բարեպաշտ ծնողքիս թելադրութեամբ, մտայ մեր հաւատքի տունէն ներս, ուխտելով ծառայել Աստուծոյ, հայ եկեղեցիին եւ հայ ազգին:



Փառք Ամենակալին, որ ծնողացս փափաքը կարողացայ իրականացնել, Դպիր, Սարկաւագ եւ ի վերջոյ Քահանայ: Այսպիսով կեանքս ամբողջութեամբ նուիրեցի Աստուծոյ, եկեղեցիիս եւ ժողովուրդիս:

Փառք Ամենակալին, որ տարիներ աշխարհական կեանք վարելէ ետք, դիմում կատարեցի Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի այդ շրջանի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Ադան Սրբ. Եպիսկոպոս Պալիօզեանին, որ զիս ձեռնադրեց Քահանայ: Թող իր անշեշ հոգին հանգչի երկնային խաղաղութեան ու լոյսերու մէջ:

Իմ սրտագին աղօթքս ու մաղթանքս է որ բարձրեալն Աստուած միշտ անսասան պահէ Հայաստանեայց Առա-

քելական Սուրբ Եկեղեցին եւ ձեզի՛, սիրելի ու հաւատացեալ զաւակները մեր եկեղեցոյ, արժանացնէ առողջ եւ արեւաշատ օրերու, որպէսզի ստանալով աստուածային օրհնութիւնները, ձեր կեանքի օրերը ըլլան երջանկաշատ, լի աստուածային շնորհներով եւ օրհնութիւններով:

Այս առիթով, իմ խորին շնորհակալութիւնը Եկեղեցոյս Ծիական Խորհուրդին, որ ընդառաջելով Հոգեւոր Հովիւ Տ. Աւետիս Քահանայ Համբարձումեանի դիմումին, սիրայօժար կերպով ըստանձնեց ու կազմակերպեց այս երեկոյթը: Շնորհակալութիւն Առաջնորդ Սրբազան Հօր, որ իր գեղեցիկ խօսքերով գօտեպնդեց մեզ եւ բոլոր անոնց, որոնք բաժին վերցուցին իրենց սրտավնդիչ խօսքերով եւ այսօրուան հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին: Շնորհակալութիւն բոլորիդ, որ ձեր ներկայութեամբ կը պատուէք եկեղեցոյ սպասաւորները:



Թագաւոր Երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛ եւ զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան: Ամէն:

Ստորեւ կը ներկայացնենք նաեւ Տէր Նորայրի հակիրճ կենսագրութիւնը:

Ծնած է Հալէպ 1938-ին: Աւագանի անունով Գեորգ: Ծնողները՝ Այնթապցիներ, մագապուրծ ազատած են Եղեռնի ջարդերէն: Մայրը՝ ուսումնատէնչ եւ հաւատացեալ հայուհի, առաջնորդած է զինք դէպի մայր եկեղեցի, ուր ստացած է հոգեկան սնունդ:



Բազմանդամ ընտանիքի Հայրը՝ Սարգիս հազի կրնար հասնիլ ապրուստ ապահովելու երկու մանչի եւ 5 աղջիկներու: Սակայն Գէորգ աչքի կը զարնէր որպէս ուսումնասէր պատանի: Հետեւաբար, իր յաճախած Մեսրոպեան Նախակրթարանի տնօրէն Պարոն Յարութին Պարտիզպանեան ամէն ճիգ ի գործ կը դնէ որ Գէորգ ուսումը շարունակէ Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքին մէջ՝ Անթիլիաս: Սակայն կամքէ անկախ պատճառներով այս փափաքը չիրականանար: Ուստի, նախակրթարանը աւարտելէ ետք ան կը նետուի գործի ասպարէզ, տպարանի մէջ կ'աշխատի որպէս կազմարար, գրաշար եւ տպագրիչ: Ապա գործ փոխելով կը դառնայ ինքնաշարժներու ելեկտրականութեան վարպետ եւ կ'ունենայ իր սեփական գործատեղին: Սակայն հայերէն գիրքը կ'ըլլայ իր ընկերը եւ ինքնաշխատութեամբ կը բարեկաւէ լեզուն եւ գիտելիքներու պաշարը:

Տէր հայրը մանուկ հասակէն մաս կազմած է Հալէպի Ս. Գէորգ Եկեղեցւոյ դպրաց դասին: Եղած է նաեւ Կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչ:

1964-ին կը ստանայ ուրար կրելու իրաւունք եւ կը նշանակուի դպրապետ Հալէպի Ս. Յակոբ Եկեղեցւոյ:

1969-ին կ'ամուսնանայ Օրդ Սոնա Մերչէեանի հետ եւ կը կազմեն հայաբոյր ընտանիք մը, Աստուած կը շնորհէ չորս զաւակներ՝ Սարգիս, Վարդէնի, Յակոբ եւ Հուրի:

1979-ին կը ձեռնադրուի սարկաւազ: 1985-ին, Սիտնիի մէջ կը ձեռնադրուի քահանայ:

1991-ին կը ստանայ լանջախաչ կրելու իրաւունք, 1996-ին Շաղկեայ Փիլոն իսկ 2004-ին կը ստանայ Աւագ Քահանայ կոչուելու պատիւը:

1985-2006 Տէր Նորայր վարած է Ս. Յարութին եկեղեցւոյ հոգեւոր հովիւի պաշտօնը:

Քառասուն տարի խմբագրած է Ս. Յարութին եկեղեցւոյ պաշտօնաթերթը Լոյս ամսագիրը, հոգեւոր հովիւի բազմաբնոյթ եւ խճողուած աշխատանքներուն կողքին:

Տէր հայրը նաեւ հոգեւոր դաստիարակութիւն ջամբած է Սիտնիի հայկական վարժարաններու մէջ եւ ազգային տօնակատարութիւններու թէ դպրոցական հանդէսներու ընթացքին արտասանած է իր սրտի խօսքը:

Հայ Քրիստոնէայ հոգեւորականին յատուկ, ժամանակին դէմ մրցումի մէջ եղած աննկուն կամքի տէր հոգեւորական է Տէր Նորայրը:

### *Բարի Ապաքինում*

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան, Թեմական Խորհուրդը եւ Փարոսի Խմբագրութիւնը բարի ապաքինում կը մաղթեն Սուրբ Յարութին Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Պատույ Ատենապետ Պրն Պետրոս Զօրլուին, որուն կրծքավանդակը վնասուած է ինքնաշարժի արկածի հետեւանքով: Փառք կու տանք Աստուծոյ, որ յետ հիւանդանոցային խնամքի Պրն Զօրլու վերադարձաւ իր բնակարանը եւ առողջութիւնը յառաջխաղացք կ'արձանագրէ:

### *Get Well Wishes*

His Eminence Archbishop Haigazoun Najarian with the Diocesan Council and the Paros editorial team extend their get well wishes to Holy Resurrection Church Parish Council Honorary Chairman Mr Bedros Zorlu who suffered injuries to his ribs following a car accident. We thank Almighty God that he is now recuperating at home after being hospitalised for a few days and is making progress to improved health.





**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ**  
**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND**

**Առաջնորդ՝ Primate**  
**ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊՍ ՆԱՃԱՐԵԱՆ ARCHBISHOP HAIGAZOUN NAJARIAN**

## **ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Սոյն հաղորդագրութեամբ կը տեղեկացնենք աստրալիահայ համայնքը, որ ՆՍՕՏՏ Գարեգին Բ., Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց թեմի Առաջնորդի թեկնածութեան համար Թեմական Խորհուրդին շնորհեց եռանուն ցանկ մը, որպէսզի Թեմական Խորհուրդը յարմարագոյն թեկնածուն ընտրէր թեմին նոր Առաջնորդ: Այդ անուանացանկը կը ներառէր հետեւեալ հոգեւոր հայրերը.

- Գերշ Տէր Նարեկ Եպիսկոպոս Պերպերեան – Առաջնորդ Պրագիլիոյ Հայոց Թեմին
- Գերշ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան – Առաջնորդ Պալթեան Երկիրներու Հայոց Թեմին:
- Հոգշ Տէր Զաքարիա Ծայրագոյն Վարդապետ Բաղումեան – Ս. Էջմիածին

Հետեւելով Վեհափառ հօր խորհուրդին, ծանօթացման նպատակով, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր 2024-ին, Թեմական Խորհուրդը Աստրալիա հրաւիրեց երեք թեկնածուները, որոնք պատարագեցին, հանդիպումներ ունեցան հոգեւոր հովիւներուն, ծխական խորհուրդի անդամներուն, երիտասարդներուն եւ աստրալիահայ համայնքի անդամներուն հետ:

Թեմական Խորհուրդը ունեցաւ պաշտօնական ժողովներ եւ խորհրդակցութիւններ երեք թեկնածուներուն հետ, նկատի առաւ քահանայ հայրերուն եւ չորս ծխական խորհուրդներու ատենապետներուն կարծիքներն ու տպաւորութիւնները, ապա, իր 23 Դեկտեմբեր 2024ի արտահերթ ժողովին, գաղտնի քուէարկութեամբ, միաձայնութեամբ ընտրեց Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը որպէս Առաջնորդ թեմիս: Ընտրութեան արդիւնքները անմիջապէս փոխանցուեցան Նորին Սրբութեան:

Վեհափառ Հայրապետը, իր 31 Յունուար 2025 թուակիր օրհնաբեր նամակով վաւերացուց եւ նշանակեց Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը Առաջնորդ Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին:

Ապագայ հաղորդագրութեամբ յաւելեալ տեղեկութիւն կը փոխանցենք Վարդան Սրբազանի Առաջնորդի հանգամանքով Աստրալիա ժամանման, ինչպէս նաեւ յարակից այլ մանրամասնութիւններու մասին:

**Դիւան**  
**Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Առաջնորդարանի**  
**1 Փետրուար 2025**



## Լուրեր Ծովխերէն

## Ուէնթուրթովիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

**Դշ., 1 Յունուար** – Արժանապատիւ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան մատուցեց Ամանորի Պատարագը, որուն ընթացքին տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք եւ նուորհներ:

**Կիր., 5 Յունուար** – Հայկազուն Սրբազան, ինչպէս աւանդաբար ամէն տարի, Ճրագալոյցի պատարագը մատուցեց Ուէնթուրթովիլի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ, ի ներկայութեան բազմաթիւ հաւատացեալներու ինչպէս նաեւ ի մասնակցութեան խորանի վրայ բազում ծառայողներու, ինչ որ դրական երեւոյթ էր եւ ոգեւորող: Սրբազան իր սպասարկեց Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, հոգեւոր հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ:

Նախքան պատարագ, տեղի ունեցաւ ժամերգութիւն, որուն աւարտին կարդացուեցաւ Դանիէլ Մարգարէի թողոթը: Բնաբանը առնելով Մատթէոսի Աւետարանի 1:22-էն, թէ «Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, անոր անունը էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգմանուի Աստուած մեզի հետ է», Սրբազան հայրը տուաւ իր յաւուր պատշաճի քարոզը: Ան բացատրեց որ մարդկութիւնը հեռացած էր Աստուծմէ եւ հակառակ Աստուծոյ փորձերուն՝ չէր կրցած վերադառնալ Անոր: Բացատրեց թէ ինչպէս Եսայի մարգարէ մարգարէացած էր թէ շուտով Աստուծոյ ներկայութիւնը պիտի տեսնուէր մարդկութեան մէջ: Սրբազանը նաեւ բացատրեց ճրագալոյցի իմաստը եւ հաստատեց իրողութիւնը, որ ան որ Աստուծոյ կու գայ՝ լոյսին մօտեցած կ'ըլլայ:

Սրբազանը գեղեցկօրէն բացատրեց թէ Երուսաղէմը պէտք էր կարենար երկինքի պատգամը կարդալ, թէ պիտի ծնէր Աստուածորդին, սակայն Երուսաղէմի իշխանութիւնը, իր թագաւորութեան պահպանմամբ սահմանափակուած, այլ բան չէր կրցած տեսնել մինչ մղոններ հեռու ապրող մոզերը կարդացին Երկնքի պատգամը եւ եկան ճնարադրելու Մեսիային առաջ:

Սրբազանը ակնարկելով Դանիէլ Մարգարէի թողոթին, բացատրութիւն տուաւ հաւատացեալներուն թէ ինչպէ՞ս Սեդրաք, Միսաք եւ Աբեթնագով կրակի բոցերուն մէջէն կը քալին անեղծ, բայց բոցերուն մէջ կ'երեւէր ուրուականը չորրորդ անձի մը, որ կը խորհրդանշէր գալիք Քրիստոսը:





Սրբազան հայրը յորդորեց նիւթը չաստ-  
ւածացնել, որովհետեւ նիւթի կեանքը  
շատ կարճ է մարդուս համար, առա-  
ւելագոյնը իր ապրած կեանքին չափ,  
մինչդեռ մեզի տրուած այդ կարճ ժա-  
մանակը պէտք է կարենանք օգտա-  
գործել հոգեւոր արժէքներու ձեռք-  
բերումով: «Մեր կեանքը պէտք է գիտ-  
նանք համեմել Աստուծով» եզրափակեց  
Սրբազանը:

Յուարտ Պատարագի Սրբազան հայրը  
օրինեց ներքին գործածութեան համար  
կոչնակ մը նուիրուած Տէր եւ Տիկին  
Ստեփան եւ Հիլտա Գրգեաշարեան-  
ներու կողմէ, Տիկին Գրգեաշարեանի  
հօրեղբոր՝ հանգուցեալ Նշան Գայիք-  
եանի յիշատակին: Յիշենք որ զանգակաստան մեծ զանգին պէ նուիրատուները Գրգեաշարեան ամուլն է:  
Ապա Սրբազան հայրը եւ Տէր Միւռն թափօրով բարձրացան Պաթմանեան սրահ, ուր տեղի ունեցաւ  
տնօրհնէք: Յուարտ տնօրհնէքի, եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը պարգևատրեց Տիկնանց աշխատասէր  
Յանձնախումբի տիկինները, 2024-ի ամբողջ տեւողութեան ընթացքին իրենց կատարած անսակարկ եւ  
անտրտունջ հսկայ աշխատանքին համար: Տիկինները, մի առ մի, իրենց պարգևները ստացան  
Սրբազան հօր եւ Տիկին Թալին Կարապետեանի ձեռամբ:




Խթման գիշերը աւարտեցաւ ճաշկերոյթով, պատրաստուած Տիկնանց Յանձնախումբին կողմէ:



**Բշ., 6 Յունուար** – Սուրբ Ծննդեան Պատարագ եւ Ջրօրհնէք: Տէր  
Միւռն պատարագեց եւ օրինեց Ջուրը որ կը խորհրդանշէր  
Քրիստոսի Մկրտութիւնը: Այս տարուան Սուրբ Խաչին Կնքահայրն էր  
Յովիկ սարկաւագ Գլնձեանը: Ապա Տէր հայրը տուաւ իր քարոզը,  
որուն աւարտին բարձրաձայն աւետեց՝ «Քրիստոս ի մէջ մեր  
յայտնեցաւ» որուն հաւատացեալները պատասխանեցին՝ «Օրհնեալ է  
Յայտնութիւնն Քրիստոսի»:

**Գշ., 7 Յունուար** – Յիշատակ  
Մեռելոցի օր: Տէր հայրը այ-  
ցելեց Ըուքուտոսի գերեզմա-  
նատունը եւ աղօթեց բոլոր  
ննջեցեալներուն հոգիներուն  
խաղաղութեան համար:

**Կիր., 12 Յունուար** – Յըն-  
թացս պատարագի, Տէր  
Միւռն, իր քարոզին մէջ,  
բացատրեց թէ, այն օրէն երբ  
Աստուած ուխտ կնքեց Աբ-  
րահամի հետ, նորածինները



Ցրդ օրը պէտք էր թլփատուէին: Քրիստոնէութեան մէջ Ցրդ օրը  
մանուկները կը մկրտուին ազատելու համար Ադամական  
Մեղքէն եւ վերստին ծնելու համար Քրիստոսով: Այս է նոր Ուխտը որ Աստուած կնքեց իր Եկեղեցիին  
հետ:



Տէր Միւռն աւելցուց ըսելով թէ Աստուած երկիրը ստեղծեց 6 օրերու ընթացքին եւ եօթներորդ օրը հանգիստ ըրաւ: ՈՒԹԵՐՈՐԴ օրը պիտի գայ միայն Քրիստոսի երկրորդ գալուստով: Այն ասէն մաքուրը պիտի ապրի իսկ անմաքուրը՝ պիտի դատապարտուի: Ան ըսաւ որ Յիսուս սուրբ անուն մըն է, եզակի եւ պաշտելի: Յովհաննէս 16:23-ի մէջ Յիսուս կ'ուսուցանէ. «Խնդրէ Հօրմէն Իմ անունովս եւ Ան քեզի պիտի տայ ամէն ինչ որպէսզի երջանիկ ըլլաս»: Տէր հայրը պատգամեց որ Յիսուս անունը պէտք է ուշադրութեամբ գործածել եւ զայն պարապ տեղ բերանը չառնել:

**Կիր., 19 Յունուար** – Տէր Միւռն պատարագեց եւ նախքան քարոզ, Յովհաննու Կարապետի տօնին առիթով օրհնեց բոլոր անոնք որոնք Յովհաննէս եւ Կարապետ անունները կը կրէին: Ան բացատրեց թէ «Կարապետ» կը նշանակէր Յիսուսին «առջեւէն քայլող»: Ան խօսելով Յովհաննէս Մկրտիչի կեանքին մասին ըսաւ որ ան որպէս Վկայ եւ Նահատակ յանդուգն քարոզիչ էր եւ մօտ ընկեր՝ Յիսուսի: Ան լեցուած էր Սուրբ Հոգիով իր մօր արգանդին մէջ: Սուրբերու շարքին մէջ ան երկրորդ տեղը կը գրաւէ Սրբուհի Աստուածածնէն ետք բացատրեց Տէր Միւռն:

**Կիր., 25 Յունուար** – Տէր Միւռն եւ Ծխական Խորհուրդի ատենապետը մասնակցեցան Պլաքթաունի Եթովպական Առաքելական Եկեղեցոյ կազմակերպած շարականներու եւ աղօթքներու ձեռնարկին, տօնելու համար Եթովպական Ծննդեան եւ Մկրտութեան ինչպէս նաեւ Ս. Գեորգի տօները: Ապա տեղի ունեցաւ շքերթ Ուինսթըն Հիլզի Սկաուտական դաշտին մէջ, շարականներու եւ աղօթքներու ընկերակցութեամբ, որ աւարտեցաւ աւանդական սիրոյ ճաշով: Հոգեւորականներն ու երիտասարդներու վարչութիւնը յայտնեցին իրենց երախտագիտութիւնը իրենց հրաւերին ընդառաջ գացած ըլլալնուս համար:



**Կիր., 26 Յունուար** – Տէր Միւռնի քարոզը կը կեդրոնանար Աստուծոյ հետ մարդուն ունեցած յարաբերութեան վրայ, որուն հիմքը Մէրն է, իսկ Աստուծոյ սէրը մեծ է հանդէպ մարդկութեան: Հետեւաբար մենք պէտք է սիրենք իրար, պէտք է գղջանք եւ ներենք, պէտք է կարդանք Աստուածաշունչը, որ կենաց հացն է: Յաւարտ Պատարագի տեղի ունեցաւ խաղողօրհնէք, որմէ ետք օրհնուած ողկոյզները բաժնուեցան հաւատացեալներուն:

*Մարի Զլէր Թորոսեան*



## Հայ Համայնքի Բարեկեցության Կեդրոն

**Յունուար 24-ին** Սուրբ Յարութին Եկեղեցու Էսկաբեան Սրահը լի էր բարի և յուզական, լեցուն յիշողութիւններով հարուստ յոյզերով, քանի որ ՀՀԲԿ-ի Մայրերու խումբը, իրենց ընտանիքներով, կազմակերպած էին սիրելի Սրբազան Հօր Ողջերթի հաւաքոյթ:

Ներկայ էին նաև Եկեղեցու Հոգևոր Հովիւը՝ Արժ Տէր Աւետիսը և ՀՀԲԿ-ի Տնօրէն Տիկ. Զեփիտ Մուրատեանը:

Անշուշտ դժուար էր երևակայել, որ տաս և առաւել տարիներ աւստրալահայ համայնքին իր առաջնորդութիւնը բերած, խոնարհ և պարկեշտ ծառայութիւն տարած Սրբազան Հօր պէտք է ըսենք «Բարի Ճանապարհ»: Շատ խառն, յուզական զգացողութիւններ կ'ապրէին իւրաքանչիւրը՝ յիշելով Սրբազան Հօր հետ կապուած այս կամ այն իրադարձութիւնը, բայց և այնպէս Սրբազան Հայրն իրեն յատուկ ուրախ, խաղարկային և կատակասէր բնաւորութեամբ հաւաքուածներէն կարողացաւ, առաւել կամ նուազ չափով, հեռացնել կակիծն ու կարօտը և պարուրել բոլորը իր հայրական սիրով, գուրգուրանքով և հոգատարութեամբ:

ՀՀԲԿ-ի Մայրերու խումբը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ Սիրելի Սրբազան Հօր, իր իմաստուն հովուութեան, մշտամնայ խորհուրդներուն, Եկեղեցու յարկին տակ ամբարուած գեղեցիկ յիշողութիւններու, սիրոյ և հոգատարութեան համար և աղօթքով առ Աստուած կը մաղթենք քաջառողջութիւն, ամենայն բարիք և արևշատութիւն:

**«Լաւագոյն առաջնորդը ան է, երբ մարդիկ հազիւ գիտեն անոր գոյութեան մասին, երբ անոր գործը աւարտած է, անոր նպատակը կատարուած և մարդիկ կ'ըսեն՝ մենք ինքներս այդ ըրած ենքը»:**

— Լատ Յզի

Սիրով և լաւագոյն մաղթանքներով՝  
ՀՀԲԿ Մայրերու խումբ







## ԼՈՒՐԵՐ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԷՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ  
(31 Դեկտեմբեր, 2024)

Միրելի բարեպաշտ ժողովուրդ,  
Ամանորի խորախորհուրդ այս երեկոյ  
Հայրապետական Մեր սերն ու օրհն-  
ությունն ենք բերում ամենքիդ ի  
հայրենիս և ի սփիւռս:

Դիմաւորում ենք փրկչական 2025  
թուականը: Մեր կեանքում առկայ  
չփարատուած մտահոգություններով  
ու հոգսերով հանդերձ՝ Նոր տարի  
մուտք ենք գործում լաւատեսութեամբ  
և բարի սպասումներով: Ամանորի  
յուսատաս ապրումները ընտանեկան  
մեր յարկերում են, եկեղեցիներում ու  
ծառայութեան վայրերում, ամենուր,



որտեղ համախմբուած ենք միմեանց փոխանցելու մեր մաղթանքներն ու ջերմ զգացումները:

Ամանորը առիթ է ինքնաքննութեան, անդրադառնալու ազգային ու հայրենական մեր կեանքը յուզող  
խնդիրներին: Ամանորը հրաւեր է նորոգութեան, հրաւեր ապագայի շուրջ մտորումների, կեանքն առաւել  
ապահով, բարօր ու շէն դարձնելու նախաձեռնությունների:

«Նորոգուեցէք ձեր մտքով և հոգով ու հազէք նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծու՝ արդարութեամբ  
և ճշմարիտ սրբութեամբ» (Եփ. 4.23-24),- պատգամում է առաքեալը: Մուրբգրային այս յորդորին  
ունկնդիր՝ սիրոյ, բարութեան ու արդարութեան ճանապարհով ընթանալով, կարող կը լինենք,  
սիրելիներ, դիմակայել ծանր, անգամ անելանելի թուացող իրավիճակներին: Կարող կը լինենք ուժ գտնել  
նեղությունները համատեղ ջանքերով յաղթահարելու, փորձությունները փորձառութեան վերածելու,  
ձախողումներն ու պարտությունները՝ ձեռքբերումների վերափոխելու և մեր նոր օրը կառուցելու՝  
ապաւինած առաքելական խօսքին, թէ՛ «ամէն բան կարող եմ ինձ զօրացնող Քրիստոսով» (Փիլիպ. 4. 13):  
Այս հաստատ համոզումով ենք պատմութեան ողջ ընթացքում մեր հարազատ բնօրրանում ապրել, մեր  
պետականությունը կերտել և օրհասական պահերին յանձնառու ոգով համախմբուել յանուն հայրենիքի  
հզօրացման և ազգային տեսիլքների մարմնաւորման: Մաքառել ու տոկացել ենք առ Տէրը յոյսով և  
առաքեալի խօսքի նկատմամբ հաւատով, թէ՛ նեղություն ունենք, բայց ընկճուած չենք, կարօտեալ ենք,  
բայց յուսահատ չենք, հալածուած ենք, բայց լքուած չենք, չարչարուած ենք, բայց կործանուած չենք  
(հմմտ. Բ Կորնթ. 4.8-9):

Արդ, մեր կեանքում ծառայած դժուարությունների յանդիման հարկ է աննկուն մնալ և առկայ  
մարտահրաւերների ու պարտադրուող պահանջների հանգուցալուծումը չփնտռել հայրենավնաս  
զիջումների, մեր սրբություններից ու աւանդական արժէքներից հրաժարման միջոցով: Աներեր մնանք  
մեր պատմութեանն ու արժեհամակարգին հաւատարմութեան մէջ, անխաթար պահպանենք մեր  
ինքնությունը, ինչը կարևոր է նոր սերնդի ոգու և գիտակցութեան կերտման, նաև աշխարհում մեր

պետութեան և ժողովրդի հեղինակութեան ամրապնդման, ազգային իրաւունքների պաշտպանութեան համար: Հաւատում ենք, որ մեր պատմութիւնը զարդարուելու է նոր վերելքով: Լուսաւոր գալիքի մեր ձգտումներում զինուենք յոյսով և հաւատով, Աստծուն ապաւինած իրագործենք իւրաքանչիւր մեր առաքելութիւնը՝ ի սեր անձնական ու հաւաքական մեր կեանքի բարօրութեան: Նորոգուած կեանքով կարող պիտի լինենք կերտել նոր իրականութիւն, որտեղ գերակայ կը լինեն ուղղամտութիւնն ու համերաշխութիւնը, օրինայարգութիւնն ու հայրենանուիրումը, նոր իրականութիւն, որտեղ իւրաքանչիւր յանձնառութիւն միտուած կը լինի մեր պետութեան հզօրացմանը, ազգի անվտանգ ու արժանապատիւ կեանքի ապահովմանը, արցախահայութեան անօտարելի իրաւունքների պաշտպանութեանը: Այս տեսլականով վերափոխենք մեր կեանքի ընթացքը և միշտ քայլենք սիրոյ և միաբանութեան կենարար ճանապարհով:

Միրելի հաւատաւոր ժողովուրդ, տարեմուտի սեւին աղօթենք առ Աստուած մեր հայրենիքի, հայոց բանակի, հայրենի հողից ու տնից բռնութեամբ զրկուած արցախցիների, նահատակուած զաւակների կորուստը սզացող, գերեվարուած և անյայտ կորած սիրելիների ցաւով ապրող ընտանիքների, հիւանդների ու զրկանքների մէջ գտնուողների համար: Աղօթենք նաև աշխարհասփիւռ մեր քոյրերի ու եղբայրների համար, ովքեր կրում են պատերազմների կործանարար հետևանքները: Հայցենք խաղաղութիւն համայն աշխարհին, մեր հայրենիքին ու ժողովրդին: Թող Տէրը օգնական ու զօրակից լինի ազգիս հայոց՝ շնորհելով լուսառատ նոր հորիզոններ:

Շնորհաւոր Նոր տարի: Բարի և օրհնեալ տարի:

### ՍՈՒՐԲ ԾՆՆՂԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԻԱԾՆԱԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ



Յունուար 5-ին Քրիստոսի Սուրբ Ծննդեան և Աստուածայայտութեան բերկրառատ տօնին առիթով, Միաձնաէջ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ճրագալոյցի Սուրբ Պատարագ, որուն կը մասնակցէին Մայր Աթոռի միաբանները, Արցախի նախագահ տիար Սամուէլ Շահրամանեանը, ԱՀ պետական այրեր և ուխտաւոր հայորդիներ: Պատարագիչն էր Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:

Սուրբ Պատարագի ընթացքին Վրթանէս Սրբազանը, իր քարոզին մէջ ի մասնաւորի նշեց. «Ինչպէս

ամէն նոր մարդու ծնունդ կոչուած է լինելու սիրոյ պտուղ, այնպէս էլ Աստուածորդու ծնունդը մարդկութեան հանդէպ Աստուծոյ գերագոյն և անսակարկ սիրոյ զօրաւոր ապացոյցն է: Քրիստոս Իր ծնունդով սկիզբ դրեց մարդկութեան փրկչագործութեանը, որն իր կատարումին հասաւ Տիրոջ խաչելութեան ու հրաշափառ Յարութեան խորհրդով:

Ամենակարող Աստուած ընտրեց մարդեղութեան ճանապարհը՝ եկաւ աշխարհ և մեզ յիշեցրեց, որ կոչուած ենք դէպի երկինք, դէպի Իրեն գնալու ու Իր կեանքով ցոյց տուեց, թէ ինչպիսին պէտք է լինի այդ ընթացքը»:

Անդրադառնալով Հայրենիքի առջև ծառայած մարտահրաւերներուն, անվտանգային խնդիրներուն, Արցախի կորուստին, Վրթանէս Սրբազանը նշեց. «Սուրբ Ծննդեան մտորի առաջ ծնկած՝ մենք աղօթում ենք մեր երկրի և պետականութեան անսասանութեան համար, այս պահին սահմանը հսկող մեր



զինուորների համար, մեր նահատակ քաջորդիների հոգիների խաղաղութան, անյայտ կորած և գերեալ մեր զուակների շուտափոյթ վերադարձի համար»:

Աւարտին, Պատարագիչ եպիսկոպոսը, աղօթք վերառաքելով առ Աստուած, դիմեց ներկայ հաւատացեալներուն, յորդորելով, որ Սուրբ Ծննդեան տօնախմբումը չըլլայ միայն սուրբգրային գեղեցիկ պատումի մը յիշատակում, այլ իւրաքանչիւրի սրտին ու հոգիին մէջ թող ծնի Մանուկ Յիսուս:

«Ամէնքս այսօր մեզ հարցնենք. «իսկ իմ սրտում ես ծնունդ տուել՞ եմ սիրոյ գործերի, իմ հոգում տեղ պատրաստե՞լ եմ հաւատի համար, և իմ մտքում վա՞ր եմ պահել արդեօր յոյսի ջահը»:

Միայն դրական պատասխանի դէպքում Մանուկ Յիսուսի Ծնունդը պիտի լուսաւորի մեր կեանքը և մեզ համար դառնայ իրապէս Սուրբ Ծնունդ», - նշեց Վրթանէս Սրբազանը:

Սուրբ Պատարագի աւարտին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացաւ Աւագ Սուրբ Խորան և վառեց Յիսուս Քրիստոսը խորհրդանշող մումը, որմէ կենսատու լոյսը բաշխուեցաւ հաւատացեալներուն:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանութեան մասնակցութեամբ, Վեհարանին մէջ, նախագահութեամբ Վեհափառին, կատարուեցաւ տարուան առաջին Տնօրինները:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**



Միրելի բարեպաշտ ժողովուրդ, Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան և Աստուածայայտնութեան լուսաշող տօնին, համախմբուած մեր սուրբ եկեղեցիների կամարների ներքոյ, փառաբանում ենք Բարձրեալ Աստծուն, որ մարդկութեան հանդէպ անհուն սիրով ու ողորմութեամբ ուղարկեց Իր Միածին Որդուն՝ ազատելու մարդ արարածին մեղքից ու մահուան կապանքներից: «Փառքի Թագաւոր, Քո անձառ խնարհութեամբդ եկար մարդկութեան փրկութեան համար» - օրհներգում է շարականագիրը:

Այսօր Սուրբ Ծննդեան հրաշագարդ իրադարձութիւնն է վերստին յառնում մեր հայեացքի առջև: Երկնային բարձունքներում գահին բազմող Փառքի Թագաւորը ծնում է աղքատիկ մսուրում: Փրկչի Ծննդեան հրեշտակաձայն աւետիսին ունկնդիր՝ պարզասիրտ հովիւները խնարհուում են Մանուկ Աստուածորդու առջև: Իմաստուն մոզերը երկրպագում են Փրկչին, Ով աստուածային խնամքով մարդկութեանը առաջնորդում է դէպի բարիք, հաճութիւն ու համերաշխութիւն:



Աստուածորդու հրաշափառ Սուրբ Ծնունդը անճառելի խորհուրդ է՝ մտքին անհասանելի, բայց հաւատքով ճանաչելի և ընկալելի: Փրկիչը խոնարհուեց և մարմին առաւ նիւթականից դէպի հոգևորն ու աստուածայինը բարձրացնելու մարդկային սրտերն ու մտքերը: Անմահը մահկանացու դարձաւ՝ ճշմարիտ կեանքի և յաւիտենութեան ճանապարհը ցոյց տալու մարդկութեանը՝ համաձայն Իր խօսքի. «Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և Կեանքը» (Յովհ. 14.6): Այսօր էլ բերթեհեմեան պայծառափայլ աստղը փորձութիւններով խտովայոյց աշխարհում փրկութեան յոյսի ճանապարհն է ուղենշում: Սուրբ Ծննդեան գիշերը վկայում է, որ անգամ նեղութիւնների խաւարում փայլատակում է Աստծոյ լոյսը, ծագում է Արդարութեան Արեգակը, ինչպէս անուանում է Քրիստոս շարականներում և մարգարէութեան մէջ (Մաղաք. 4.2): Քրիստոսին ընդառաջ գնալը, Նրա պատուիրաններով ապրելը վեհացնում և զօրացնում է անձերին ու ժողովուրդներին, արժանի դարձնում աստուածային պարգևների և օրհնութիւնների: Խանձարուրով պարուրուած Աստուածորդուն ընդունելով մարդը զգեստաւորում է փրկութեան շնորհով, որը հաւատացեալի կեանքում բխեցնում է երկնառաք բարիքների աղբիւրը: Աստուածամերժ ընթացքները, սակայն, մարդկութեանը կանգնեցնում են չարիքների և կործանարար սպառնալիքների առջև: Այսօր ամենքս ականատես ենք Աստծուց հեռացող աշխարհի դառնագին իրականութեանը՝ նիւթականի պաշտամունք, քաղաքական ու տնտեսական շահեր, տիրապետելու մոլուցք, որոնց զոհաբերում են անհատի և ժողովուրդների իրաւունքները, բարոյականութեան սկզբունքները, համամարդկային խաղաղ համակեցութիւնը, երջանկութիւնն ու բարիքը: Այս արհաւիրքների հետևանքով մարդկութիւնը յայտնուել է աղիտալի իրողութիւնների առջև՝ պատերազմներ, զոհեր ու աւերածութիւններ, կարիքի ու դժուարութիւնների մէջ հասակ առնող որբացեալ և անօթևան երեխաներ, հակամարտութիւնների դաժան պայմաններում գոյատևող, գաղթական դարձած ընտանիքներ: Այսպիսի տագնապալի իրավիճակները հրամայական են դարձնում աշխարհի բարեփոխումն ու ժողովուրդների համերաշխ գոյակցութիւնը, որը մշտապէս պատգամում է Մանուկ Աստուածորդու Սուրբ Ծննդեան՝ «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. 2.14) հրեշտակաձայն

օրհներգութեամբ:

**Միւրեւիներ,**

Աշխարհաբաղաւորական ներկայ բարդ իրադրութեան մէջ ծանր փորձութիւնների ենթարկուեց մեր ժողովուրդը, բռնազավթուեց և հայաթափուեց Արցախը, գրաւուած են մնում Հայաստանի ինքնիշխան տարածքներ, տակաւին գերութեան մէջ են և անյայտ կորած մեր բազում զաւակներ, Ադրբեջանի կողմից շարունակում են հնչեցուել նորանոր պահանջներ ու սպառնալիքներ: Այսօր մեր երկիրը խտովայոյց է ներքին խնդիրներով՝ կեղծիք, անօրինականութիւն, չարակամութիւն, քինախնդրութիւն, արատաւոր երևոյթներ, որոնք հասարակութեան մէջ պատճառ են դառնում անվստահութեան, անտարբերութեան, թշնամանքի ու պառակտումի և հանգեցնում ազգի տկարացման: Այս ամենին զուգընթաց քրիստոնէական բարոյական ընկալումների և ազգային-հոգևոր աւանդական արժէքների խեղաթիւրումը աղճատում է մեր ժողովրդի ինքնութեան դիմագիծը, թուլացնում ազգային ոգին, ներքաշում դէպի մեղքի, յուսահատութեան որոգայթներ: Սուրբ Ծննդեան խորհրդով մեզ վերստին երկնային հրաւերն է ուղղում՝ ընթանալու սիրոյ, հաշտութեան, արդարութեան տէրունաւանդ ճանապարհով: Այս կոչը իրագործելի է





միայն քրիստոնեական կենսակերպով: Այս կոչը իրագործելի է, եթե անձնական բարեկեցութեանն ու յարմարաւէտութեանը չզոհաբերենք մեր ինքնութիւնը, ժողովրդի անվտանգութիւնն ու հայրենիքի բարօրութիւնը: Չենք կարող ծառայել համընդհանուր բարիքին՝ տրուելով փառասիրութեանն ու իշխանատենչութեանը և առաջնայնութիւն տալով սեփական շահերին: Մենք՝ որպէս ազգ, լինի հայրենիքում, թէ սփիւռքում, կը յաջողենք, եթէ միշտ հաւատարիմ մնանք Քրիստոսին, Նրա վարդապետութեանը, ընթանանք Աստուծոյ



Խօսքի և աստուածային կամքի համաձայն, ձերբազատուենք մոլորեցնող ու բաժանարար մարդկային նենգամտութիւնից: Միաբանուենք յանուն մեր պետութեան անասանութեան և անվտանգութեան, Արցախից բռնի տեղահանուած մեր քոյրերի ու եղբայրների նկատմամբ արդարութեան վերականգնման, յանուն մեր ազգի ու հայրենիքի ապահով և բարօր յարատւութեան: Լինենք միմեանց գործակից և ոչ՝ հակառակորդ, լինենք նախանձախնդիր ծառայելու և ոչ՝ դիրքն ու հանգամանքը չարաշահելու մեջ: Տարագիր չդառնանք մեր երկրից, ապրենք ու արարենք մեր հարազատ բնօրրանում: Երեխաների նոր ծնունդով, արժանաւոր զաւակների դաստիարակութեամբ հզօրացնենք մեր ազգն ու հայրենիքը: Բուրաքանչիւրս մեր կարողութեան չափով ներդրում բերենք համազգային կեանքի առաջընթացին՝ ի պայծառութիւն մեր պետութեան և ի շահ մեր ժողովրդի լուսաւոր գալիքի:

Սուրբ Ծննդեան ուրախալի աւետիսով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրիան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանին, մեր Սուրբ Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին: Մեր ողջոյնն ենք յղում ի Քրիստոս Մեր հոգևոր եղբայրներին՝ քոյր Եկեղեցիների Պետերին և հաւատաւոր իրենց հօտին: Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփիւռս աշխարհի:

Սուրբ Ծննդեան հոգենորոգ այս օրը միասնաբար աղօթք մատուցենք մարդեղացեալ Աստուածորդուն և հայցենք, որ առատ լինեն երկնահեղ օրհնութիւնները ազգային ու հայրենական մեր անդաստանում, հաստատուն մնան տերունաւանդ հաւատքը, յոյսն ու սէրը մեր կեանքում: Խնդրենք Երկնաւոր Տիրոջ զօրակցութիւնը մեծ կորուստներ կրած և հարազատ բնօրրանից զրկուած արցախահայութեանը: Խնդրենք Ամենակալից, որ խաղաղութիւն ու բարօրութիւն հաստատուի ողջ աշխարհում և հայրենի մեր երկրում: Թող Աստուծոյ ամենախնամ Աջը և Սուրբ Ծննդեան կենարար շնորհները մշտապէս հովանի լինեն համայն մեր ժողովրդին այսօր և միշտ և յաւիտեանս. ամէն:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, Ձեզ և մեզ մեծ աւետիս:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱԻՈՐԵՑ  
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆԸ**

Յունուար 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վեհափառը Տօներու առիթով հանդիպում ունեցաւ Մայր Աթոռի աշխարհական աշխատակիցներու հետ: Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեան, ներկաներու անունով շնորհաւորեց Նորին Սրբութիւնը հոգենորոգ տօներու առիթով և Հայոց Հօր փոխանցեց բոլորին սէրն ու նուիրումը: Մայր Աթոռի պաշտօնէութեան անունով շնորհաւորական խօսք ուղղեց Վարչատնտեսական բաժնի փոխ-տնօրէն տիար Արմէն Ղազարեանը:

Այնուհետև Վեհափառը փոխանցեց իր բարեմաղթանքները: Ան բարձրորեն գնահատեց պաշտօնէութեան նախանձախնդիր ծառայութիւնն ու նուիրումը ի խնդիր Սուրբ Էջմիածնի առաքելութեան առաւել արդիւնաւորման ու զօրացման: Վեհափառը գոհունակութեամբ անդրադարձաւ Միւռնօրհնութեան և Մայր Տաճարի վերածման, Հայ Եկեղեցւոյ և Ժողովուրդի կեանքին մէջ կարևորագոյն իրադարձութիւններու կազմակերպման մէջ Մայր Աթոռի աշխարհիկ պաշտօնէութեան անուրանալի ներդրման: Ան յորդորեց զօրեղ կամքով, յոյսով և հաւատքով դիմակայել առկայ բոլոր փորձութիւններն ու դժուարութիւնները՝ վստահութիւն յայտնելով, որ մեր ժողովուրդի զաւակները աստուածապաւինութեամբ կրնան յաղթահարել հայրենիքի առջև ծառայած մարտահարուէրները: Վեհափառը ընդգծեց, որ Եկեղեցին հովուական, հոգևոր-խնամատարական և ընկերային գործունէութեամբ իր կարելի ջանքերը կը ներդնէ ի նպաստ հայ ժողովուրդին:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ  
«ԲՈՅԱ» ԳԻՏԱՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**



Յունուար 13-ին Վեհափառը ընդունեց «Բոյա» գիտահետազօտական կեդրոնի (Պեկին) պատուաւոր նախագահ Բուիցի Լիույի գլխավորած պատուիրակութիւնը:

Հիւրերը ներկայացուցին կեդրոնի ծրագրերը և գործունէութիւնը, ինչպէս նաև Հայաստան այցի նպատակը՝ ուսումնասիրել հայկական մշակոյթը, ասանդութիւնները, Հայ Եկեղեցւոյ պատմութիւնն ու գործունէութիւնը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը անդրադարձաւ Սուրբ Էջմիածնի առաքելութեան հայ ժողովրդի կեանքին մէջ քրիստոնէական հաւատքի կարևոր

